

<b>Մասնագիտության նկարագիրը</b>	
<b>Պաշտոնի /գբաղմունքի/ անվանումը</b>	«Փորձարկող՝ էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների» 0714.01.01.4
<b>I. Դերը</b>	Էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների կարգավորման, կարգաբերման և փորձարկման աշխատանքների կատարում:
<b>II. Խնդիրների բնագավառները</b>	<ol style="list-style-type: none"> <li>1.Նախապատրաստական աշխատանքների կատարում</li> <li>2. Փորձարկման աշխատանքների իրականացում .</li> <li>3.Մեխանիկական և էլեկտրական կարգավորման և կարգաբերման աշխատանքների կատարում</li> <li>4.Անսարքությունների բացահայտում և վերացում</li> <li>5 .Տեխնիկական սպասարկման և փորձարկման աշխատանքներին առնչվող փաստաթղթերի ձևակերպում և լրացում</li> </ol>
<b>Խնդիրների բնագավառ 1.</b> Նախապատրաստական աշխատանքների կատարում	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ul style="list-style-type: none"> <li>- Աշխատանքների կատարման կարգադրագրերի և գծագրերի ուսումնասիրում՝ անհրաժեշտ նյութերի, չափիչ սարքերի ու հարմարանքների նախապատրաստում,</li> <li>- Նախապատրաստական աշխատանքներին առնչվող նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի լրացում:</li> </ul>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>- Հիմնական և օժանդակ սարքավորումները պատրաստ են էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների փորձարկմանը,</li> <li>- Առնչվող նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը լրացված են:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 2.</b> Փորձարկման աշխատանքների իրականացում	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ul style="list-style-type: none"> <li>- Պարզ էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների էլեկտրական, մեխանիկական և փորձարկման աշխատանքների կատարում՝ նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան,</li> <li>- էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների փորձարկման ընթացքում ի հայտ եկած արատների, անսարքությունների և նրանց առաջացման պատճառների բացահայտում ու վերացում,</li> <li>- էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների</li> </ul>

	մեխանիկական և էլեկտրական կարգաբերման աշխատանքների կատարում, - Փորձարկման աշխատանքներին առնչվող փաստաթղթերի լրացում:
<b>Կատարման չափանիշներ</b>	- Փորձարկումը կատարված է գործող նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, - Փորձարկմանն առնչվող աշխատանքային փաստաթղթերը լրացված են:
<b>Խնդիրների բնագավառ 3.</b> Մեխանիկական և էլեկտրական կարգաբերման աշխատանքների կատարում	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	- էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների փորձարկման ու տեխնիկական սպասարկման ժամանակ փականագործական, հավաքման և էլեկտրամոնտաժման աշխատանքների կատարում, - էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների էլեկտրական ու մեխանիկական հանգույցների հավաքման և կարգաբերման աշխատանքների կատարում՝ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:
<b>Կատարման չափանիշներ</b>	- Մեխանիկական և էլեկտրական կարգաբերման աշխատանքները կատարված են նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, - Մեխանիկական և էլեկտրական կարգաբերման աշխատանքներին առնչվող փաստաթղթերը լրացված են:
<b>Խնդիրների բնագավառ 4.</b> Անսարքությունների բացահայտում և վերացում	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	- էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների անսարքությունների դիտարկում, զննում, բացահայտում, - Անսարքությունների առաջացման պատճառների բացահայտում, - Անսարքության բնույթի, ծավալի և բարդության աստիճանի, որոշում, - Անսարքության վերացման հնարավորության, աշխատանքների կատարման տեխնոլոգիական գործընթացների իրականացման գնահատում և ոչ բարդ անսարքությունների վերացում:
<b>Կատարման չափանիշներ</b>	- Կատարվել է դիտարկում, զննում,

	<ul style="list-style-type: none"> <li>- Անսարքությունը բացահայտված է,</li> <li>- Անսարքության առաջացման պատճառը որոշված է,</li> <li>- Անսարքության բնույթը, ծավալը, բարդության աստիճանը որոշված է,</li> <li>- Ոչ բարդ անսարքությունների վերացման աշխատանքները կատարված են,</li> <li>- Աշխատունակությունը գնահատված է:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 5.</b>	Տեխնիկական սպասարկման աշխատանքների իրականացում
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ul style="list-style-type: none"> <li>- Էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների տեխնիկական սպասարկման նախապատրաստում,</li> <li>- Էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների տեխնիկական սպասարկում՝ համաձայն նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների,</li> <li>- Էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների տեխնիկական սպասարկման աշխատանքների փաստաթղթերի լրացում:</li> </ul>
<b>Կատարման չափանիշներ</b>	Տեխնիկական սպասարկման աշխատանքները կատարված են և դրանց առնչվող փաստաթղթերը լրացված են ամբողջությամբ:
<b>III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/</b>	Պատասխանատու է կազմակերպության էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների փորձարկման, անսարքությունների հայտնաբերման ու նրանց վերացման, տեխնիկական սպասարկման, կարգաբերման ու ճշգրտման աշխատանքների իրականացման համար:
<b>IV. Լեզուները</b>	Հայերեն –լավ օտար լեզու–բավարար
<b>V. Համակարգիչը</b>	Տեքստային և աղյուսակային խմբագրիչներ-բավարար Internet -բավարար
<b>VI. Գիտելիքները</b>	<ul style="list-style-type: none"> <li>- Գծագրության հիմունքներ,</li> <li>- Էլեկտրատեխնիկայի հիմունքներ,</li> <li>- Օգտագործվող նյութերի տեսակները և հատկությունները,</li> <li>- Չափիչ սարքերի կառուցվածքը և հիմնական բնութագրերը,</li> <li>- Փորձարկման մեթոդներ,</li> <li>- Աշխատանքի անվտանգություն և առաջին օգնություն:</li> </ul>
<b>VII. Կարողությունները և հմտությունները</b>	- Աշխատանքային տեղի և գործիքների ճիշտ նախապատրաստում,

	<ul style="list-style-type: none"> <li>-Փորձարկման և մոնտաժային տեխնիկական փաստաթղթերի ճիշտ մեկնաբանում,</li> <li>- Փորձարկման աշխատանքներում օգտագործվող սարքերի և գործիքների կիրառման հմտություններ,</li> <li>- Անսարքությունների և արատների գնահատում և բացահայտում,</li> <li>- էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների կարգավորում և կարգաբերում,</li> <li>- էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների տեխնիկական սպասարկում,</li> <li>- Փորձարկման կատարում՝ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:</li> </ul>
<p><b>VIII. Անձի որակական հատկանիշներ</b></p>	<p>Պարտաճանաչ, կարգապահ, հաղորդակցվող, խնայող, նորը ընկալող:</p>